

# Գիտություն

ՀՈՒԼԻՍ-  
ՕԳՈՍՏՈՍ

№ 7-8

(356)

2021 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



Սույն թվականի հուլիսի 12-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանի, ԳԱԱ նախագահության անդամների, գիտական կազմակերպությունների տնօրենների և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ

## ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեցին գիտաշխատողների աշխատավարձերի բարձրացման և գիտական կադրերի որակավորման անցկացման վերաբերյալ հարցեր

Սարգիս Չայոցյանի և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մովսիսյանի հետ: Քննարկվեցին գիտաշխատողների աշխատավարձերի բարձրացման և գիտական կադրերի որակավորման անցկացման վերաբերյալ հարցեր:

Գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Չայոցյանը ներկայացրեց ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 747-Լ որոշման և ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության

գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» N 935 որոշման հիմնական դրույթները:

Նշվեց, որ գիտաշխատողների աշխատավարձերը բարձրանալու են 2022 թ. հունվարից: Այդ պատճառով գիտական կադրերի որակավորման գործընթացը պետք է ավարտին հասցվի 2021 թ. հոկտեմբերին, որպեսզի պետական բյուջեում կատարվեն համապատասխան փոփոխություններ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

## «ԱՐՄԱՐՏՖԵՍՏ». ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՒՄ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հունիսի 24-30-ը ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում տեղի ունեցավ «ԱրմԱրտ-Ֆեստ» անունը կրող հայկական արվեստի համառուսաստանյան առաջին փառատոնը: Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ զանգվածային միջոցառումների տևական սահմանափակումներից հետո, ասես ձմեռից հետո առաջին ձմեռադիվեր՝ վեց օր շարունակ մոսկովյան ամենատարբեր բեմահարթակներից հնչում էր հայ երգն ու պարը, ասմունքը, ՌԴ-ում ՀՀ դեսպանատան ցուցասրահներում ցուցադրվում էին հայկական մշակույթի բարձրարժեք նմուշները:

Այս ամենախաղեայ միջոցառման հյուրերի թվում էին մոսկովյան էլիտայի բազմաթիվ ներկայացուցիչներ, հասարակական-քաղաքական գործիչներ, մշակույթի աշխարհի երևելի դեմքեր, ինչպես ռուս, այնպես էլ արտասահմանյան բազմաթիվ լրագրողներ և հեռուստաընկերություններ:

Փառատոնն անցկացվեց Ռուսաստանի Հանրապետության Թուրքմենստանի մարզում



տանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպան Վարդան Տողանյանի հովանու ներքո: Մշակութային այս յուրօրինակ մարաթոնը նպատակ ուներ ամրապնդելու հայ-ռուսական մշակութային կապերն ու երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Փառատոնի մասնակիցները ծանոթացան հայ ականավոր գործիչների կյանքին, գործունեությանն ու թողած հարուստ ժառանգությանը, որոնք իրենց հետքն են թողել հայ-ռուսական դարավոր բարեկամության վրա:

Հանդիսավոր միջոցառման բացմա-

նը ողջունի խոսքով հանդես եկավ դեսպան Վարդան Տողանյանը: Դիվանագիտական առաքելության ղեկավարն իր խոսքում նշեց, որ փառատոնը կոչված է նպաստելու ժամանակակից պայմաններում երկու երկրների հասարակությունների միջնաշխարհային երկխոսության ու կապերի զարգացմանն ու խորացմանը: Դեսպանը հույս հայտնեց, որ փառատոնի բազմաբնույթ ծրագիրը կգրավի մալ ռուս հանդիսատեսի ուշադրությունը, իսկ փառատոնը կընդլայնվի և կդառնա ամենամյա:

Փառատոնը հնարավորինս ներառել էր արվեստի բոլոր ժանրերը՝ կերպարվեստ, երաժշտություն, գրականություն, կինո, թատրոն, դիզայն, մորաձևություն: Ռուսաստանում ապրող ժամանակակից արվեստագետների գործերից զատ՝ միջոցառման ծրագրում ընդգրկված էին մալ մեծ վարպետների՝ Վարդգես Սուրենյանցի, Եղիշե Թադևոսյանի, Մարտիրոս Սարյանի, Մինաս Ավետիսյանի, Ջոտտոյի, Գառզուի, Փարա-

➤6

## ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,  
Ու մենք անհատնում  
Էն անլույս մըթնում  
Երկա՛ր դարերով զընում ենք դեպ վեր  
Հայոց լեռներում,  
Դըժար լեռներում:

Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,  
Մեր գանձերը ծով,  
Ինչ որ դարերով  
Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին  
Հայոց լեռներում,  
Բարձր լեռներում:

Բայց քանի անգամ շեկ անապատի  
Օրդուները սև  
Իրարու ետև

Եկան զարկեցին մեր քարվանս ազնիվ  
Հայոց լեռներում,  
Արևոտ լեռներում:

Ու մեր քարվանս շըփոթ, սոսկահար,  
Թալանված, ջարդված  
Ու հատված-հատված  
Տանում է իրեն վերքերն անհամար  
Հայոց լեռներում,  
Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը մայում են կարոտ՝  
Հեռու աստղերին,  
Երկընթի ծերին.  
Թե ե՞րբ կըբացվի պայծառ առավոտ՝  
Հայոց լեռներում,  
Կանաչ լեռներում:



**1929** թ. հունիսի 14-ին «Պրավդա» թերթի գլխավոր խմբագիր Ն. Բուխարինը ՅՍՍՀ ժողովրդականության նախագահ Ս. Տեր-Պարթևյանին գրել է. «Թանկագին ընկ. Տեր-Պարթևյան, մեր խոշոր բանաստեղծներից մեկը՝ Օ. Մանդելշտամը, ցանկություն ունի ձայնարկել ձեր հանձնարարականը (օր.՝ հայկական արվեստի, մասնավորապես գրականության պատմության հետ կապված կամ նման մի բան): Նա շատ կրթված մարդ է և կարող էր ձեռք բերել օգուտ բերել: Նրան պետք է միայն հանգիստ թողնել մի որոշ ժամանակ և աշխատելու հնարավորություն տալ: Կարող է գործ գրել ձայնարկել մասին: Պատրաստ է սովորել հայոց լեզուն և այլն: Խնդրում են, պատասխանեք հեռագրով

բանական»: Հետաքրքիր է, որ Ս. Գևորգյանը բանաստեղծի համար պարսկերեն երգել է մի քանի հատված Ֆիրդուսուց: Մանդելշտամը Երևանում մահ լսել է միաժամանակ՝ երգչախմբի կոմիտայան կատարումները: Այդ օրերին Երևանում էր գտնվում Մ. Շահինյանը, ում հետ Մանդելշտամները հանդիպում են, զրուցում տարբեր թեմաներով: Այստեղ Մանդելշտամը ծանոթանում ու մտերմանում է հայտնի ռուս կենսաբան Բ. Կուզնիցի հետ, ում Մոսկվայի համալսարանը ձայնարկել էր գործունեությունը «կարմիր միջատի»՝ որդան կարմիրի ուսումնասիրության համար:

Մանդելշտամները մեկ ամիս հանգստանում են Սևանում՝ ձայնարկելու արհմիությունների առաջին հանգստյան տանը: «Քանի որ մահ (Օ. Մանդելշտամը - Ա.

մակի խորքը: Աշխարհում արդեն մոռացվել են բոլոր գույները, բայց դրանք դեռևս չեն մեռել հայոց պատմական հողի վրա՝ հպարտ իրենց ծեր գիտնականներով»:

Ձայնարկում գտնվելու օրերին Մանդելշտամներն ակամքաբար են լինում Արարատ լեռան շրջանում քրդերի ապստամբության և թուրքերի դաժան գործողությունների մասին: Ն. Մանդելշտամը գրում է. «Քրդերը դարի առաջին քառորդին կոտորել են հայերին, իսկ երկրորդ քառորդին իրենց կոտորվեցին այն տիրոջ կողմից, ով նրանց սպանության էր ուղարկել»: Սա խոսում վկայություն է, որ Օ. Մանդելշտամը քաջատեղյակ էր թուրքերի իրագործած շայն ցեղասպանությանը: Իսկ «Հաջորդ վարդն են օրորում...» բանաստեղծության մեջ «Հեռու են ողջը՝ ետևում սարի»-ն տողը

րին ցավակցում են, որով օտարի տեսանկյունից հպարտանում են: Ձայների լեզունությունը կենսամեթոդ, նրանց կոպիտ քնքշությունը, նրանց ազնվաբար աշխատանքային ջանքով լեզուն ոսկրածուծը, նրանց անբացատրելի մոլորակներն ամեն կարգի մետաղաֆիզիկայի հանդեպ և սքանչելի մտերմավարությունը ռեալ իրերի աշխարհի հետ-այդ ամեն ինչ ասում էր. դու արթնության մեջ ես, մի՛ վախեցիր քո ժամանակից, մի՛ խորանանկիր,- գրում է Օ. Մանդելշտամը: - Եվ արդյոք սա այն պատճառով չէ՞ր, որ ես գտնվում էի իր առնչության գործունեությանը հռչակված մի ժողովրդի մեջ, որը, ընդհանրապես, ապրում է ոչ թե ըստ կայարանային և կամ հիմնարկային, այլ ըստ արևային ժամացույցի, որպիսի տեսել են Ձվարթնոցի ավերակներում

## ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (Ծննդյան 130-ամյակի առթիվ)

ծեր ներկայացուցչություն: Ձեր Բուխարին»:

Ռուս (ծագումով՝ հրեա) բանաստեղծ, արվեստի տեսաբան, թարգմանիչ Օսիպ Եմիլի Մանդելշտամի (1891-1938) ձայնարկում գալու ցանկությունն ամենակին պատահական չէր. դրան մեծապես նպաստել են նրա ծանոթությունը՝ 1829 թ. ձայնարկում կատարած Պուշկինի ծանապարհորդությանը, 1916 թ. հունվարին Վ. Բրյուսովի ուղևորությանը, 1928 թ. ամռանն ու 1929 թ. գարնանն Ա. Բելիի այցելությանն ու այդ ամենի հանրագումարում՝ ձայնարկում, հայ ժողովրդի, նրա պատմության և մշակույթի մասին նրանց գրած հայտնի գործերին: Դրան ավելացնենք և այն, որ 1920-ական թվականների սկզբին Մանդելշտամը եղել էր Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Թիֆլիսում, Բաքվում, ծանոթ էր հայ իրականությանը, թարգմանել էր Կարա-Ղարվիշի «Պար լեռան վրա» գործը, Մոսկվայում շփվել էր Պետերբուրգի խորհրդի նախագահ Ա. Խալաթովի, մահ Ռուսաստանի հասարակական-քաղաքական և մտավորական միջավայրերում մեծ հեղինակություն վայելող գրող Մ. Շահինյանի հետ, ով 1920-ական թվականների կեսերին եղել էր ձայնարկում, Նախիջևանում ու Լեռնային Ղարաբաղում և, ըստ այդմ, քաջ գիտեր մեր ժողովրդի անցյալն ու ներկան:

1930 թ. մայիսի կեսերին գալով ձայնարկում Օ. Մանդելշտամը նախ Լենինականում մասնակցում է մայիսյան տոնակատարություններին, ապա ժամանում է Երևան: «Մեր հյուրանոցի («Երևան» - Ա. Ջ.) փոքրիկ սենյակում միանգամից հայտնվեցին ձայնարկում մշակույթի մասին գրքեր. Սարգիսովսկի (խոսքը, ըստ էության, վերջինիս «Հայերի ճարտարապետությունը և եվրոպան» գործի մասին է - Ա. Ջ.), հայ տարեգիրներ, Մովսես Խորենացի և շատ ուրիշներ, ինչ վերաբերում էր այդ երկրի տնտեսությանն ու բնությանը, - վերիջում է բանաստեղծի կինը՝ Նադեժդա Մանդելշտամը: - ձայնարկումի տնտեսության մասին գրքերից Օ. Մանդելշտամն առանձնացրեց ալեքսանդրովյան ժամանակի չինովնիկ Շոպենի «ձայնարկումի աշխատանքային նկարագրությունը» գիրքը: Նա համեմատում էր երկրի հանդեպ Շոպենի կենդանի հետաքրքրությունը գայրաքանդ և փոքրիկ քաղաքի անթիվ «գործունեության» անտարբերության հետ, որոնց հանդիպում էինք հյուրանոցում»: Առաջին իսկ օրը նրանց մոտ՝ «Երևան» հյուրանոց է գալիս «հրաշք նկարիչ» Մարտիրոս Սարյանը: Երևանում եղած ժամանակ Մանդելշտամներն այցելում են նրա արհեստանոցը՝ հիանում գեղանկարչի «երկնագույն շրջանի» նկարներով: Հանդիպել են Ա. Թամանյանին ու երիտասարդ ճարտարապետներին, լսել նրանց քննարկումները: Մանդելշտամը հաճախել է ձայնարկումի պետական գրադարան, օգտվել նրա ֆոնդերից, ծանոթացել ու շփվել է տնօրենի՝ բանասեր, թարգմանիչ ու թատերական գործիչ Մամիկոն Գևորգյանի հետ, ով «պերճախոս է, խեղամիտ ու սիրալիր, բայց նրա էրուդիցիան չափազանց համառ է ու աղմկակից, իսկ խոսքը՝ յուրուտ ու փաստա-



Ձախից աջ. Յա. Խ. Խաչատրյանը, Ն. Յա. Մանդելշտամ, Օ. Ե. Մանդելշտամ և մի խումբ երեխաներ: Երևան, Ավան, 1930 թ.:

Ջ.) շատ ծանր էր տանում երևանյան շոգը և տոթը, նրան առաջարկել են հանգստանալ Սևանի կղզում, և այդպես Մանդելշտամները հայտնվեցին այդ հանգստյան տանը,- վերիջում է Անահիտ Խուդավերդյանը: - Մանդելշտամ ամուսինները երեխաներ չունեին, բայց շատ էին սիրում և փափագում էին երեխաներ ունենալ: Բանաստեղծի կինը երագում էր տղայի մասին «...» Երբ Օսիպ Մանդելշտամը մտնում էր սեղանի մոտ աշխատելու, մահ ոտքերի ծայրերի վրա զգուշորեն դուրս էր գալիս, իր հետևից փակելով դուռը, դեպի իրեն էր գրավում լուսամուտի տակ խաղաղորդ երեխաներին, նրանց հեռու էր տանում, որպեսզի չխանգարեն թեմին բանաստեղծություններ գրել»:

Սևանում Մանդելշտամները շփվում և մտերմանում են ազգագրագետ, պատմաբան ու հնէաբան Ասատուր Խաչատրյանի, ձայնարկումի Կենդանությունի մահաբան, պետական և կուսակցական գործիչ, պատմաբան ու գրականագետ Արտաշես Կարինյանի, գավառագետ Հովհաննես Սաղաթելյանի, քիմիկոս Ստեփան Համբարյանի, դոկտոր Ռեդեբերգի, ծննդաբան ու միջաքանդ Ա. Անդրյանի հետ՝ «Ծանապարհորդություն ձայնարկում»-ում յուրաքանչյուրի մասին տալով կենսագրական տեղեկություններ և ինքնատիպ բնութագրություններ: Ահա թե ինչ է գրում Ն. Մանդելշտամը հայ գիտնականների մասին. «Եգիպտագետների ու դրամագետների՝ հայ գիտնականների հետ հանդիպեցինք Սևանում: Նրանք երկրագնդի բոլոր կողմերից եկել էին իրենց հայրենիքը: Նրանք դուրս եկան իսկական եվրոպացիներ և շատ ավելի էին նման գիտնականների, քան նրանք, որոնց հանդիպել ենք Մոսկվայում, մեծ մասամբ Ցեկուրուի համրակցաբաններն ու առողջարաններում: ...Հայ ալևոր գիտնականները տիրապետում էին ոչ միայն տարածական, այլև ժամանակային, այսինքն՝ պատմական տեսողությանը. նրանք կարողանում էին հայացքով թափանցել ժամա-

խոսում է այն մասին, որ բանաստեղծը գիտի, թե ովքեր են Արարատ սարի ետևում գտնվող տարածքների իսկական տերերը...»

1930 թ. մայիսից մինչև հոկտեմբերի սկիզբը Մանդելշտամներն ապրում և շրջում են ձայնարկում ցուցաբերելով մեծ հետաքրքրություն ձայնարկումի հայ մշակույթի հանդեպ. այցելում են պատմա-ճարտարապետական հուշարձաններ, լինում են Ձվարթնոցի ավերակներում («Ոչ փլատակներ. ոչ...» տողով սկսվող բանաստեղծության մեջ նկարագրվում է Ձվարթնոցը), Աշտարակում, Բյուրական գյուղում, բարձրամուն լեռագագածի դարատափերը՝ հայկական ու քրդական քոչատեղերը ... Փորձում է սովորել գրաբար, որոշում գրել «Արշակ և Շապուհ» թեմայով գործ: Դրա առիավատյան է «Ծանապարհորդություն ձայնարկում» արձակ գործի «Ալագյազ» բաժնի վերջում պատմիչ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» ազատ վերաշարադրումը՝ Արշակի, Շապուհի, Անիոշ բերդի, Դրաստամատի անունների վկայակոչումներով:

Երևանում Օ. Մանդելշտամի գտնվելու օրերի մասին կա ուշագրավ մի դրվագ՝ կապված Ավանի Հովհան Բազարյանի (Կաթողիկե տաճար) ավերակ եկեղեցի կատարած այցելության հետ: Քաղաքի «Ларская уличка»-ի (ներկայիս՝ Արամի փողոց) բնակիչ հին երևանցիները հիշում են. օրերից մի օր հանկարծ նկատում են, որ երեք օր է, ինչ Մանդելշտամը չի երևում ոչ հյուրանոցում, ոչ էլ Ապամդարյան փողոցում (որտեղ հաճախ էր լինում Բ. Կուզնիցի հետ հանդիպելու համար): Պարզվում է, որ մահ եղել է Ավանում, գնել է մատուռը, քարակոթողներ, խաչքարերն ու ապրել եկեղեցում: «Ինչպես ինքն է ասել, «գրուցել է հեթանոսական վիշապի հետ, որը մայր տաճարի ելքի վերևում է, և առյուծի հետ, որը փոքրիկ բակում է: Հեթանոսության և քրիստոնեության ամենահազվադեպ սինթեզ»: Մանդելշտամն Ավանի տաճարն անվանակոչեց «կողովարդի հեթանոսական փոքրիկ կրպակ» և չէր դադարում գարնանալ շինարարի ճարտարապետական մտահղացումով: Նկատենք, որ պահպանվել է այդ իրադարձությունն արձանագրած խմբակային մի լուսանկար, որտեղ Մանդելշտամներից բացի Մ. Շահինյանի ամուսինն է՝ բանասեր, թարգմանիչ Յա. Խաչատրյանը և մի խումբ երեխաներ: Ի դեպ, այդ լուսանկարը միակ վավերագիրն է ձայնարկում Մանդելշտամների գտնվելու մասին:

Ն. Մանդելշտամը ձայնարկում գալու կապակցությամբ գրում է. «Մանդելշտամի համար ձայնարկում գնալը վերադարձ էր դեպի հարազատ եզրեր՝ դեպի վայրն այն, ուր սկզբնավորվել էր ամենայն ինչ, հայրերի մոտ՝ դեպի ակունքը: Տևական լռությունից հետո բանաստեղծությունները նրան վերադարձան ձայնարկում և այլևս երբեք չլքեցին...»: Ռուս բանաստեղծի համար ձայնարկում «Երկրի գիրքն է ... որով սովորել են առաջին մարդիկ»: «Չկա ոչինչ ավելի ուսանելի ու բերկրալի, քան երբ մխրճվում են բոլորովին այլ մի ռասայի հասարակության մեջ, որին հարգում են, ո-

աստղաբաշխական անվի՞, թե՞ քարի մեջ ներմուծված վարդի կերպարանքով»:

ձայնարկումի Թիֆլիս վերադառնալիս՝ Հուլիի 1920 թ. մարտյան կոտորածներից 10 տարի անց, Մանդելշտամները լինում են հայկական հիմնավորյալ այդ քաղաքում: Հարց է ծագում ինչն՞ով էր պայմանավորված նրանց այցը Հուլի: Կարծում ենք, դրան մեծապես նպաստել են Մ. Շահինյանի վերը նշված ուղևորությունը և քաղաքի նկարագրությունը, որին, անշուշտ, ծանոթ է եղել ռուս բանաստեղծը, հայաստանյան շփումները մտավորականության հետ, մահ՝ ծնունդով շուշեցի Ս. Տեր-Պարթևյանը, ում հոգածության տակ են եղել Մանդելշտամները ձայնարկում:

Հուլիից ստացած սահմանեցուցիչ տպավորությունների մասին Ն. Մանդելշտամն իր հուշերում ունի ուշագրավ տեղեկություններ (այդ մասին տե՛ս «Գիտություն», Մոյենբեր, 11, 1920 թ.):

Ինչևէ ձայնարկումից մեկնելուց հետո՝ 1930 թ. հոկտեմբեր-նոյեմբերին, Օ. Մանդելշտամը Թիֆլիսում գրում է «ձայնարկում» բանաստեղծությունների հայտնի շարքը, 1931 թ. Հուլիից ստացած ծանր տպավորության տակ «ձայնարկում» բանաստեղծությունը, իսկ 1933 թ. հրատարակում է «Ծանապարհորդություն ձայնարկում» էսսեն: Վերջինս պատմություն է ձայնարկումի մասին, բայց և խորհրդածություն է մարդկության պատմության ու աշխարհի լեզուների, ֆրանսիական իմպրեսիոնիզմի, ֆիզիոլոգիայի և լուսավորության շուրջ: «Պրավդա» և «Լիտերատուրնայա գազետա» թերթերում այս գործի մասին տպագրվում են խիստ բացասական կարծիքներ, նշվում է, որ Մանդելշտամի կերպարներից մեծապետական շուկինիզմի հոտ է գալիս, քանզի գովազատված շայլելով ձայնարկումի մասին՝ գովաբանում է նրա էկզոտիկան, նրա ստրկական անցյալը, իսկ ներկայի մասին ոչ մի տող չի գրել: Ինչպես գրում է Ն. Մանդելշտամը, «Հայաստանում արձագանքեցին այդ հոգվածին և բանաստեղծին մամուլում անվանեցին դաշնակ: Դա նշանակում էր, որ ձայնարկումի մոտեքն ընդմիջում փակ է Մանդելշտամի առաջ, բայց մեկնելիս մահ գիտեր, որ իրեն վիճակված չէ վերադառնալ»: Դրա առիավատյան «ձայնարկում» շարքից ստորև բերվող բանաստեղծությունն է.

Էլ երբեք թե՛ չեն մայի,  
Հայոց կարճատես երկինք,  
Էլ չեն սևեռվի կկոցած աչքերով  
ճամփորդի վրանին Արարատի,  
Չեն բացի այլևս երեքը  
Կավազործ քրթողների դարանում  
Հրաշագեղ հողիդ մայրաքաղաքը սմամեջ,  
Որով ուսում են առել առաջին մարդիկ:  
Հայաստան կատարած այցելությունն Օ. Մանդելշտամի կյանքի ամենալուսավոր էջերից է եղել: Բիբլիական երկրի հետ ծանոթությունից ծնված բանաստեղծություններն ու արձակը ռուս գրականության մեջ ձայնարկումի մասին գրված լավագույն գործերից են:

**Անուշավան ԶԱՔՐԻՅԱՆ**  
**«Պատմաբանասիրական համդես»-ի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր**

**Ուղիղ 320 տարի առաջ՝ 1700 թ., Մխիթար Սեբաստացին Կ. Պոլսում հիմնեց վանական մի միաբանություն, որը հայ մշակույթին ու մեր մտավոր զարգացման պատմությանը բերած իր նպաստով անհամեմատելի է ազգային որևէ հաստատության հետ:**

### Մինչև Մխիթարը

Անցնող տարիների հեռվից քննելով Մխիթար վարդապետի կյանքի ու գործի համազանգեցրելը՝ կրկին համոզվում ես մեծ գեղագետ Արշակ Չոպանյանի արտահայտած այն մտքի ճշմարտության մեջ, ըստ որի Մխիթարի կյանքը «մին է մարդկությանը պատուող հոյակապ դի-

մություն հիմնելու գաղափարը, որի հիմքում պիտի լինեին կրոնը, գիտությունը և միությունը: Նպատակն էր աջակցել ազգի հոգևոր և իմացական վերելքին, ծավալել ուսումնական կյանքը, գիտական և մշակութային գործունեություն:

Ստեղծվելիք կրոնական միաբանության անդամները սոսկ ճգնավոր արեղաներ չպետք է լինեին, այսինքն՝ որակական իմաստով դա մոր տիպի հաստատություն էր լինելու, որի անդամներից յուրաքանչյուրը մաս էր կազմելու լուսավորության հզոր շարժման: Վերջինս ընդգրկելու էր հայ մտավոր կյանքի գրեթե բոլոր ոլորտները՝ պատմություն, բանասիրություն, թարգմանություն, հրատարակչական գործ և այլն:

Այդ հսկա գործը ձեռնարկելուց առաջ Մխիթարն իր մտադրությունը հայտնեց



## ՄՇԱԿՏԵՎ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԷ



ցազներգություններն», որի հերոսը կարողանում է «ոչինչէն աշխարհ մը ստեղծել»:

Այդ «ոչինչն», իհարկե, նշանավոր մտածողի ժամանակի հայ կյանքի անկյալ վիճակն էր, շուրջբոլորը տիրող թանձր խավարն ու տգիտությունը: Որքան էլ որ դարեր շարունակ մեզանում «Վանորայք (այսինքն՝ վանքերը - Լ. Լ.) եղան նշանաւոր վարժարանք ուսմանց», Մխիթարի օրոք դրանցից լոկ արտաքին ճգնությունն էր մնացել: Ավելին՝ իսպառ մարել էր բուն վանականության ոգին, և վանականների մեծ մասը, ինչպես ժամանակագիրներից մեկն է գրում, «ոչ պահք եւ ոչ ծոմ ունէին. բոլոր տարին ուտիք էր իրենց համար»: Նույնը վկայում է 17-րդ դարի նշանավոր պատմիչ Առաքել Դավրիժեցին, որի վկայությամբ գյուղերում լռել էր ժամկոչի ծայրը և վերացել քահանայության շնորհը:

Դեռ ուսումնաստենչ պատանի, շրջելով վանքավանք՝ Սեբաստիայից մինչև Սևանավանք, Մխիթարը դրանցում տեսավ նվազած նախկին միությունն ու սերը, նկատեց ընթերցասիրության պակասը, որի հետևանքով մատյանները լուռ փոշոտվում էին գրադարակներում: Կրկին հիշատակենք Դավրիժեցուն. «Ոչ բնաւ ընթերցումիս գիրս, այլ էին փակեալ եւ լռեալ մատենք»: Բերենք մեկ այլ ցցուն փաստ ասվածը հաստատելու համար. Սևանավանքի առաջնորդ Զովհաննես վարդապետը, օրինակ, մեղադրվեց այն բանի համար, որ ծովը նետել տվեց բոլոր հին ձեռագրերը, որպեսզի ժամանակի Սինեոն երևանցի կաթողիկոսը (1763-1780) կղզի այցելելիս հանկարծ չտեսներ դրանց անկարգ վիճակը...

### Մխիթար և Խաչատուր

Ահա նմանատիպ վիճակն էր, որ Մխիթար Սեբաստացու մոտ ծնեց մոր միաբա-



ժամանակի հանրագետ մտածող և պոլսաբնակ ճարտասան Խաչատուր վրդ. Էրզրումեցուն՝ առաջարկելով կանգնել գործի գլուխ: Վերջինս ողջունելով հանդերձ գաղափարը՝ այն անգործադրելի գտավ «զչքավորութիւն առաւելապէս պատճառելով»: Իրոք, անդուլ ջանքերից զատ նաև նյութական մեծ միջոցներ էին հարկավոր: Այդուհանդերձ, Խաչատուր վարդապետը մինչև իր կյանքի վերջ սերտորեն կապված մնաց միաբանությանը՝ դրա հիմնադրին մեծապես օգնելով թե՛ խորհուրդներով, և թե՛ ջատագովությամբ:

### Միաբանության կազմավորման ընթացքը

Լինելով համառ ու անկոտրում կամքի տեր մարդ և հավատարիմ մնալով իր տեսլականին՝ Մխիթար Սեբաստացին հայաշատ Պոլիսն ընտրեց իբրև հիմնադրման վայր: Արևելքի մշտատատան հողը, սակայն, նպաստավոր չէր ընդունում հաստատության առաջադիմության համար: Խանգարում էին հատկապես այդ քաղաքում մոլեգնող դավանաբանական կռիվները, որոնցից խույս տալու նպատակով կաթոլիկությանը հարած հայորդին 1703-ին իր աշակերտներով ծախյալ հեռացավ դեպի Զուհանստանի Մեթոն բերդաքաղաքը: Կրելով բազում դժվարություններ՝ նա այդտեղ կառուցեց առաջին հայկական եկեղեցին ու ծավալեց գիտամանկավարժական գործունեություն՝ թեկուզ առանց դասագրքերի ու հրատարակչական հնարավորությունների: Այդտեղ էր, որ նրան կրկին օգնության հասավ վաղեմի ընկերն ու բարեկամը՝ Խաչատուր Էրզրումեցին, որ նրան ուղարկեց իր պատրաստած դասագրքերը:

Զնայած 14 տարիների տքմաջան աշխատանքին՝ ի հետևանս թուրքական հարձակման՝ նորածիլ միաբանության անդամները կրկին ստիպված եղան թող-

նել-հեռանալ՝ այս անգամ արդեն Վենետիկ: Այդտեղ արդեն բոլոր պայմանները կային հոգևոր-մտավոր գործունեությանը զբաղվելու համար: Լուսավորյալ այդ քաղաքի ծերակույտը միաբանությանը շնորհեց քաղաքամերձ Սուրբ Ղազար կղզին, որտեղ Մխիթարն իր 16 աշակերտներով մուտք գործեց 1717 թ. սեպտեմբերի 8-ին՝ Մարիամ Աստվածածնի ծննդյան օրը: Բորոտների նախկին բուժարանը հայ վանականների շնորհիվ վերածվեց հայաշունչ մեծաստանի, որտեղ Մխիթար Աբբան ձեռնհասությամբ վարեց միաբանության ոչ միայն գիտակրոնական և ուսումնական, այլև տնտեսական ու վարչական աշխատանքները՝ կառուցելով եկեղեցի ու բացելով դպրոց, որն ինքը «համալսարան» էր կոչում:

Սկզբից եթե մերժելով օտարերկրացիների անդամակցությունը՝ միաբանության երանաշնորհի հիմնադիրը միշտ վառ պահեց իր հայ աշակերտների սերն առ Զայրենիք ու հայ ժողովուրդը, նրա հոգևոր գանձերը: Անխոնջ ու բազմարդյուն աշխատությամբ նա վերաբարձեց մտավոր կյանքը մեզանում: Զինվելով մատենադարան՝ նա դրեց հայ հին ձեռագրերի հավաքման և ուսումնասիրման սկիզբը՝ միաժամանակ հրատարակելով 50 հատոր գիրք: Երևույթ էր, օրինակ, նրա հրատարակած Աստվածաշունչը (1733)՝ նրբաճաշակ փորագրություններով ու գեղեցիկ լուսանցազարդերով և բաղդատությամբ 7 այլալեզու թարգմանությունների: Լինելով գրաբարի ջատագով Մխիթարն այնուամենայնիվ առաջինն էր աշխարհաբարի քերականություն ստեղծելու հարցում (1727): Իր մյուս երկասիրություններով նա իր առջև խնդիր դրեց ձեռքագատել հայերենը լատինաբանության խորթ երևույթներից:

Զիշատակենք նաև 25 տարվա ջանա-

դիր աշխատանքի արդյունք հանդիսացող նրա «Հայկազյան բառարանը», որի առաջին հատորը լույս տեսավ հեղինակի մահից 3 շաբաթ անց: Սա նշանակալի երևույթ էր ոչ միայն հայ, այլև համաշխարհային բառարանագրության մեջ: Շնորհիվ այդ աշխատության հայերենը ժամանակին դարձավ աշխարհի վեցերորդ լեզուն՝ լատիներենից, հունարենից, իտալերենից, ֆրանսերենից ու իսպաներենից հետո, որ ունեցավ նման ամբողջական բառարան:

Տեղին է այստեղ մեջբերել լուսամիտ հայ վարդապետի հետևյալ խոսքերն Առաջաբանից, որ մահամերձ հեղինակի ընծայականն էր մայր ժողովրդին. «Խոնարհամիտ սրտիւ ընծայեմ քեզ զպտուղ բազմամեայ աշխատութեանս մուէր սիրոյ, զի ցանկալի է ինձ յինձն առնուլ եւ քեզ տալ»:

Իրոք, դրամատիկ ճակատագիր ունեցավ լուսանորոգ այս հայորդին: Ժամանակին նրան քննադատեցին և՛ առաքելական, և՛ կաթոլիկ հայերը: Առաջինները մեղադրեցին Զոռմի եկեղեցու գիրկն ընկնելու ու վերջինիս գերակայությունն ընդունելու մեջ, երկրորդները նրան ներկայացրին իբրև ընթոստ ու ինքնիշխան Զոռմի եկեղեցական իշխանությունից անկախ: Նման ամբաստանությունների գլխավոր պատճառը թերևս այն էր, որ կաթոլիկ դավանանքն ընդունելով հանդերձ՝ Մխիթար Սեբաստացին մնացել էր ճշմարիտ հայասեր ու հայրենասեր: Նրա համոզմամբ, ազգն ու կրոնը տարբեր հասկացություններ են, ուստի և հարկ չկա մեկի համար մյուսը զոհել:


### Մխիթարից հետո

Գործադրված քայլերի շնորհիվ Մխիթար Սեբաստացին շարունակական ու մշտատև դարձրեց իր սկսած գործն ու հիմնած միաբանությունը՝ անձնական ջանքերը վերածելով հավաքականի և օտար երկրների տակ ստեղծելով իմացական հայրենիք: Պատահական չէր, որ նրան կոչեցին «Նոր Լուսավորիչ ազգիս», «Երկրորդ Մեսրոպ» և այլն: Իրոք, եթե Մեսրոպ Մաշտոցը ծնեց հայոց գրերը, ապա Մխիթարը վերածնեց դրանք՝ դնելով շարժման ու գործողության մեջ: Նրա աշակերտները դրեցին հայագիտության հիմքերը Եվրոպայում՝ միաժամանակ եվրոպական միտքը ներթերելով հայ իրականությանը:

Դեռ Մխիթարի կենդանության օրոք եվրոպացի գիտնականները հաճախակի էին դիմում նրան՝ խորհուրդներ հարցնելով և խնդրելով նրա հրատարակած գրքերից: Իսկ աշակերտների համար ինքը գիտնական վարդապետի խոստում օրինակ էր, որ սովորեցնում էր համաբազուկ ու գիտական լրջությամբ աշխատել: Ուշագրավն այն է, որ նրանցից յուրաքանչյուրն ընթացավ միաժամանակ



## ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՆՏԻՊ ԳԱՆՁԵՐԻ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը լույս է ընծայել «Սրբոց տոներին նվիրված գանձարանային կանոնները» ժողովածուն, որում զետեղված են խլաթեցիական և հետխլաթեցիական խմբագրությամբ ստեղծված «Գանձարան» ժողովածուների ամստիպ նյութերը: Գրքի կազմողը, գանձերի, տաղերի, հորդորակների, մեղեդիների, փոխերի գիտական բնագրերը պատրաստողը հայ միջնադարյան հոգևոր գրականության լավագույն գիտակ և բեղուն հետազոտող Վարդան Դևրիկյանն է: Գիրքն ունի արժեքավոր առաջաբան, ծանոթագրություններ, գիտականորեն կազմած անվանացանկ, հոգևոր երգերի սկզբնատողերի, օգտագործված ծեռագրերի ցանկ: Զեռագրերը գրված են 14-17-րդ դարերի ժամանակահատվածում և գրված են աշխարհագրական առումով տարբեր վայրերում՝ Վան, Զիզան, Խլաթ, Լիմ անապատ, Կաֆա (Ղրիմ) և այլ բնակավայրեր:

Հայկական ծեռագիր մատյանները դեռևս շատ գանձեր ունեն իրենց մեջ: դրանց պատմական, ճանաչողական, գրական, քաղաքական, աստվածաբանական արժեքն անուրանալի է: Եվ այդ ամենի համար պարտական ենք հայոց եկեղեցուն, որը լուսավորության գործում փոխարինել է հայոց պետականությանն ու հիմք դարձել Հայոց պետականության վերականգնմանը: Տեղին է հիշել նշանավոր բյուզանդագետ ու հայագետ Նիկողայոս Ադոնցի հետևյալ միտքը. «Ազգային եկեղեցի ունենալ նշանակում էր ունենալ սեփական մշակույթ, ինքնահատուկ լեզու, գրականություն, արվեստ, մեկ խոսքով՝ ամեն ինչ, որ բնորոշում է ամեն ազգի հոգեկան կյանքը» (Ն. Ադոնց, Երկեր, Բ, Եր., 2006, էջ 45):

Գրիգոր Խլաթեցու կազմած «Գանձարան» ժողովածուների ամստիպ նյութերը Դևրիկյանը հրատարակել է հետևյալ բովանդակային ու իմաստային բաժանումով՝ Հին Կտակարան, Նոր Կտակարան, Ընդհանուր քրիստոնեական, Հայկական կանոններ:

Հին Կտակարանի բաժնում մտնող կա-

նոնների մեջ զանազան միավորները ներկայացնում են ընդհանուր քրիստոնեական եկեղեցու մախաիայրերին ու մարգարեներին: Նոր Կտակարանի նյութերի մեջ Մարիամ Աստվածածնի վերափոխմանը, Բեթհեղեմում մանուկների կոտորածին, Բարդուղեմեոս և Թունա առաքյալին, Ստեփանոս Նախավկային, Ղազարոսի հարությանը և Հիսուսի կյանքի շուրջ պատվող նյութերն են: Ընդհանուր քրիստոնեականում տեղ են գտել այն սրբացված անձինք, որոնք պաշտելի են բոլոր կանոնիկ քրիստոնեական եկեղեցիներում, ինչպես Գրիգոր Աստվածաբանը, Հովհան Ոսկեբերանը, Կոստանդինոս թագավորը, Եպիփան Կիարացին և ուրիշներ:

Հայկական կանոնները սերտորեն կապված են հայ ժողովրդի պատմության հետ: Բնական է, որ դրանում տեսնում ենք առաջին դարում քրիստոնեություն ընդունած Եդեսիայի հայ արքա Աբգարին, առաջինը աշխարհում՝ Մեծ Հայքում, քրիստոնեությունը պետական կրոն հռչակած Տրդատ Մեծ թագավորին: Ֆ. Բրոկհաուզ և Ի. Էֆրոնի համագիտարանում Տրդատ Մեծի մասին կարդում ենք. «Տրդատ III Մեծ (286-342) խիզախորեն կռվել է Սասանյանների դեմ: 302-ին ընդունել է քրիստոնեությունը, հեթանոսական տաճարները փոխարինել է քրիստոնեական եկեղեցիներով ու վանքերով: Քրիստոնեությունը հռչակել է պետական կրոն: Նրա գահակալությունը եղել է Հայաստանի պատմության ամենաերջանիկ ժամանակահատվածը» (Փ. Ա. Брокгауз, И. А. Ефрон, Иллюстрированный энциклопедический словарь, М., 2012, с.691):

Գրիգոր Խլաթեցու կազմած «Գանձարանի» նյութերի հրատարակումը յուրօրինակ ձևով անմահացնում է XIV դարի երկրորդ կեսի և XV դարի առաջին քառորդի (1349-1425) հայ միջնադարյան եկեղեցու, գրականության, արվեստի, մանկավարժության մեջ մեծ դեր կատարած Գրիգոր Խլաթեցու անունը: Նա նշանավոր աստվածաբան-փիլիսոփա Հովհան Որոտնեցու աշակերտներից էր, մեծանուն Գրիգոր Տաթևացու դասընկերը: Հայոց եկեղեցուն, հայերի լուսավորության գործին մեծ նվիրում ունեցող անհատականություն, որը մաս երաժիշտ ու մանրանկարիչ էր: Նա հայ եկեղեցու նոր վկաներից էր: Գրիգոր Խլաթեցու եղբորական մահվան մասին Ողբ է գրել նրա արժանավոր աշակերտ Առաքել Բաղիշեցին: Այն կոչվում է՝ «Եղբերգութիւն ի մահ անհատականութեան Ծերենց Գրիգոր վարդապետի Խլաթեցույ»: Եղբերգության ծավալուն բովանդակության մեջ ներթողական տաղերով ներկայացվում է Գրիգոր Խլաթեցու համահայկական արժեք ունեցող գործունեությունը, նրա գանձերի ու տաղերի ընտիր լինելը,

Մեծ Հայքում ունեցած հեղինակությունը, լուսավորչական գործունեությունը: Նկարագրվում են նաև նրա մահատակության հանգամանքները:

Եկեալ հասին վաղվաղակի  
Ազգն Մարաց, որ զքուրդ կոչի.

Ապանին զհայրն ցանկալի,

Ի Ցիպնավանքն երևելի (Առաքել Բաղիշեցի, Ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Արշալույս Դագինյանի, Եր., 1971, էջ 208):

Դևրիկյանը բացատրում է այն սերտ կապերը, որոնք կան «Յայսմաուրը» ժողովածուների ու գանձերի միջև:

Ժողովածուի առաջաբանում անդրադարձ կա գանձի, տաղի, փոխի, մեղեդու, հորդորակի սահմանումներին, որոնք կատարվել են տարբեր հետազոտողների կողմից: Ժողովածուի հեղինակը դրանց հիման վրա ներկայացնում է իր հստակ սահմանումները: Գրիգոր Խլաթեցին, ի տարբերություն Ներսես Շնորհալու, որը կատարելության հասցրեց հայ եկեղեցու ծիսակարգը՝ հատկապես շարականները, գրել է գանձեր: Գանձերն առավել պատմողական բնույթի ստեղծագործություններ էին և հաճախ ունեին պատմական հիմք:

Թեպետ գանձերի առաջին հեղինակ ընդունված է համարել Գրիգոր Նարեկացուն, սակայն, ինչպես վկայակոչում է Պետրոս Դևրիկյանը, Ասատուր Մնացականյանը Մաշտոցի անվան Մատենադարանի ծեռագրերի մեջ գտել է VIII դարի նշանավոր մատենագիր, թարգմանիչ, մանկավարժ Ստեփանոս Սյունեցու երկու տաղ, որոնք համապատասխանում են գանձարանային կանոնին: Երբ կարդում ենք Գրիգոր Խլաթեցու «Գանձարան» ժողովածու մտած հայ իրականության հետ կապվող գանձերը, հանգստանում ենք, որ հայ եկեղեցու գործիչները եկեղեցու ծեսը օգտագործել են ոչ միայն հավատացյալի մեջ քրիստոնեական եկեղեցու տասը պատվիրաններն ամրապնդելու, այլև հայրենասիրություն դաստիարակելու սրբազան գործին ծառայելու համար:

Բելգիացի նշանավոր հայագետ Ֆելիքս Նևը իր «Քրիստոնյա Հայաստանն ու նրա գրականությունը» աշխատության մեջ շատ է կարևորել Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկը՝ այն համարելով ոչ միայն հավատի համար մղվող պատերազմ, այլև ազգային-ազատագրական պայքարի տարեգրություն (F. Nève, L'Arménie chrétienne et sa littérature, Louvain, 1886, p.301):

«Գանձարան» ժողովածուները, ինչպես նաև «Յայսմաուրըները», սերտորեն կապված են հայ պատմիչների երկերին: Դրանց պոետիկայի գրեթե պարտադիր կանոններից է, որ ամեն մի բանաստեղծական տունն ավարտվում է **աղաչենք** կամ

**խնդրենք** բառերով:

Գանձերը, որպես գրական տեսակ, լայն տարածում են գտնում հայ միջնադարյան գրականության մեջ տասներորդ դարից մինչև տասնյոթերորդը: Եվ երբեմն ստեղծվել են պատմական դեպքի թարմ ազդեցության տակ: Դրա պերճախոս օրինակը XVII դարի փիլիսոփա, բանաստեղծ, մանկավարժ Ներսես Մոկացու գանձն է՝ նվիրված Ազուլիսում 1617 թ. նոյեմբերի 18-ին մահատակված տեր Անդրեասին: Այն գրված է կատարված դեպքի թարմ ազդեցության տակ, գրված է Սյունյաց Մեծ անապատում և շարադրվել է՝ պահպանելով գանձի գրական տեսակի բոլոր կանոնները: Այդ քերթվածի վերնագիրն է՝ «Գանձ մոր մահատակին եւ սուրբ քահանային Անդրեասի Նախաճառանցու, որ կատարեցաւ ի Շահ-Աբասէն, ասացեալ շնորհալի վարդապետին Բեղլու Ներսէս կոչեցեալ Մոկացի»:

«Գանձարան» ժողովածուներն ունեցել են ցանկեր, որպեսզի հոգևոր գործիչը եկեղեցուն հեշտությամբ գտնի տոնին ծիսական առումով համապատասխանող գանձը, տաղը, փոխը, հորդորակը:

Գանձերը երգվել են և նշվել են նրանց համապատասխան մեղեդիները խազերի՝ միջնադարյան ծայրամիջերի միջոցով: Գրիգոր Խլաթեցու կազմած գանձարանն ամբողջովին խազագրված է: Կարապետ Բաղիշեցին գանձին մախորդող կաֆայանման քառատողերում գրում է.

Կամիս ասել՝ գանձ են համով,

Ասա դու զիս եղանակով...

Եղանակէ դու զիս ծայնով...

Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» ծավալուն քերթվածն այնքան տարածված էր հայ հոգևոր կյանքում, որ որոշ գանձերի համար նշվում է, թե պետք է երգել «Յիսուս Որդու» մեղեդիով:

Գրիգոր Խլաթեցու «Գանձարանում» հատկապես շատ են Ավարայրի հերոսամարտին նվիրված միավորները, որոնցում փառաբանվում են ոչ միայն մահատակված մախարարները, այլև հոգևորականները: Եղիշեի պատմության մեջ եղած Ավարայրի ճակատամարտի նկարագիրը և գրքի վերջին՝ վկայաբանական գլուխը դարձել են գանձերի նյութ:

Տեղին է նույնությամբ մեջբերել գրքի առաջաբանն ամփոփող միտքը. «Գանձերը, լինելով կրոնական եկեղեցական խորունկ ապրումների և ազգային իղծերի արտահայտությունը, միևնույն ժամանակ հարաբերվել են տվյալ դարաշրջանի հայ կյանքի, ազգային անկախության և մտահոգությունների հետ, հոգևոր խորհուրդները առնչակցելով և կապելով հարազատ ժողովրդի ներկայի և գալիքի մտահոգություններին»:

**Անիտա ԴՈԼՈՒՍԱՆՅԱՆ**

## ՄՇՏԱՏԵՎ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՎՈՐ

➤ մի քանի ուղղությամբ՝ ստեղծելով մնայուն արժեքներ մտավոր մշակույթի բառացիորեն բոլոր բնագավառներում: Բավական է մի քանի դրվագ հիշել: Նախ՝ Միքայել Չամչյանի «Հայոց պատմությունը» (1784), որը նոր ժամանակների հայ պատմագիտության ու քաղաքական մտածողության հիմնաքարը դարձավ: Հիշատակենք նաև պատմաբան, աշխարհագրագետ, ութհատորանոց «Դարապատումի» հեղինակ Դուկաս Ինճիճյանին, որը աշխարհաբար հրապարակագրության հիմնադիրը եղավ՝ 1799-ից հրատարակելով «Տարեգրութիւն», «Եղանակ Բիւզանդեան», ապա և «Դիտակ Բիւզանդեան» պարբերականները: Հարունակությունը եղավ 1843-ին Ղևոնդ Ալիշանի սկզբնավորած «Բազմավեպը», որը հայ լրագրության կենդանի մահապետն է ու անընդմեջ հրատարակվում է մինչ օրս: 1789 թ. հիմնելով սեփական տպարան՝ մխիթարյան հայրերը մեր մա-

տենագրական գոհարներից զատ լույս աշխարհի հանեցին օտար գրական գլուխգործոցների ընտիր հայացումներ:

Ու թեև Մխիթարի մահից հետո նրա

անունը կրող միաբանությունը երկճյուղվեց 1773-ին՝ Վենետիկից զատ հանգրվանելով նաև Վիեննայում, ուժերի որևէ ջլատում տեղի չունեցավ: Հակառակը,



## ԽՈՐՀՈՒՐԴԸ

կրկնապատկվեց Մխիթարի տան հզորությունը՝ ապահովելով գործունեության բազմապիստություն և կատարյալին ձգտող մրցակցություն:

2000 թ. հուլիսին, սակայն, միացյալ ընդհանուր ժողովի որոշմամբ կրկին միավորվեց Մխիթարյան միաբանությունը, որի գլխավոր կենտրոնատեղին Վենետիկի Սբ. Ղազար Մայրավանքն է, իսկ գլխավոր մենաստանը՝ Վիեննայի վանքը: Միաբանության քահանայապետական պատվիրակը Թուրքիոյ Հայ կաթողիկե առաջնորդ Լևոն արք. Ջեքիյանն է:

Այսօր, հիմնումից 320 տարի անց, Մխիթարյան միաբանությունը հաշն եվրոպայի շարունակում է արժանապատվորեն ներկայացնել հայ մշակույթը՝ մախարհում հանդիսանալով Հայաստան այցելողների ու մեր երկրով հետաքրքրվողների համար:

**Լևոն ԱՆԾԻՎԱՆ**  
**Գծանկարները՝ հեղինակի**



# Կրթությունը, գիտությունը և իշխանությունը

(Սկիզբը նախորդ համարում)

Խորհրդային շրջանում սոցիալ-տնտեսական և պատերազմական ծանր տարիներին պետությունը հնարավորություն ստեղծեց զարգացնելու հիմնարար գիտությունները, որոնց արտադրական արդյունքներով (հատկապես՝ քիմիայի, ֆիզիկայի և մաթեմատիկական կիբեռնետիկայի) ստեղծվեցին նորամուտի հիմնարկ ձեռնարկություններ, գիտահետազոտական ինստիտուտներ, ուսումնական հաստատություններ, նաև կառուցվեցին նորամուտ քաղաքներ, գյուղեր, ճանապարհներ, երկաթգծեր, մետրո, Արփա-Սևան և այլն: Իսկ մեր ԳԱ և ԵՊՀ-ն համաշխարհային ճանաչում ունեցան: ԵՊՀ-ն ԽՍՀՄ-ում 70 լավագույնների մեջ էր, իսկ Բյուրականի աստղադիտարանը աշխարհում առաջիններից էր՝ որպես ուսումնագիտական համաշխարհային կենտրոն:

Ներկայիս բոլոր տեսակի հայտարարությունները, տարատեսակ խոսակցությունները որոշ իշխանավորների, պաշտոնյաների և այլոց կողմից՝ ԵՊՀ, ԳԱ, Բյուրականի աստղադիտարանի և ուսումնագիտական կենտրոնների ու ինստիտուտների՝ ձևափոխման, տեղափոխման, վաճառման, նույնիսկ վերացման մասին, կարելի է համարել որպես ցնորք, չնտածված, ոչ հայկական և այլախոհական բարբառացի կամ շահագիտական նպատակադրում: Դա պետականորեն անթույլատրելի վնասարժեքներով անթույլատրելի վնասարժեքներով է: Չպետք է մոռանալ, որ ԵՊՀ-ն մեր Օլիմպիան է, Ակադեմիան մեր Կրեմլն է, Բյուրականի աստղադիտարանը մեր Տիեզերական փարոսը, իսկ մնացյալները՝ մեր հայրենիքի աստղերը, որ պիտի մշտապես փայլեն: Ոչ ոք, ոչ մի հայ իրավական և բարոյական իրավունք չունի խաթարելու կամ վերացնելու համաշխարհային այդ հայկական հրաշալիքները:

Ափսոսանքով պետք է նշել, որ նշված բոլոր ձեռքբերումները, ուսման և գիտության ասպարեզում վերջին 30 տարում համարյա ի չիք դարձան, ինչի մեղավորները, նոր սոցիալ-տնտեսական պայմաններից բացի, նաև մեր երկրի ղեկավարների ոչ ճիշտ և չնտածված քաղաքականություններն էր ուսումնագիտական բնագավառի հանդեպ: Մեր ժողովրդին պետք չեն նորածին մարգարեներ, պետք են իրատես, հստակ մտածելակերպով և առողջ դատողությամբ, աշխարհի անց ու դարձը հասկացող, հեռատես, ազնիվ և հայրենամարտի անձինք: Ընդհանրապես պետք չէ երկրի առկա կարևոր խնդիրները լուծելու համար անընդհատ նշել նախորդների և ուրիշների վատ արարքները և գործունեությունները: Այդ անելը նշանակում է վազվել ցեխաջրով: Բացի նշվածից, իշխանությունների մասին մոտավորապես 2000 տարի առաջ ահա թե ինչ էր ասել Ցիցերոնը. «Ինչպես բարեկամության մեջ, այնպես էլ պետական գործունեության մեջ պետք է բացառված լինեն երկերեսայնությունը և թեմանքը»: Իսկ Վիկտոր Դյուգոյի կարծիքը շատ հետաքրքիր է ժողովրդի և կառավարության մասին. «Լինում են ավազակային կառավարություններ, բայց չի կարող լինել ավազակային ժողովուրդ»: Բոլոր իշխանավորները պարտավոր են հարգել և սիրել ժողովրդին և միշտ լսել նրա ծայրը, կարծիքը, ցանկությունները և քննադատությունները, ինչը կերի մեծ հաջողությունների: Հարազատ երկրին, հայրենիքին, ժողովրդին ազնիվ և մկրված ծառայելը սուրբ գործ է: Ուսման մեծ գործ և Տոլստոյը գրել է. «Հայրենասիրություն չի նշանակում միայն սիրել իր հայրենիքը: Դա հայրենիքից իր անբաժանելիության գիտակցումն է և նրա երջանիկ ու դժբախտ օրերը նրա հետ միասին անբաժանելիորեն վերապրելն է»: Իսկ մեծն Րաֆֆին ասել է. «Ով իր

հայրենիքը չի ճանաչում և կամենում է նրա համար մի ծառայություն անել, նման է մի դերձակի, որ մարդուն չտեսած, նրա չափերը չառած, նրա համար հագուստ է կարում»: Կուզենայինք, որ մեր ժողովուրդը անկախ բնակվելու և ապրելու վայրից, անկախ կուսակցականությունից հիշի, որ ինքը աշխարհի ամենահին ազգերից մեկի ամենը կրողն է՝ Հայ է և պարտավոր է ինչ-որ ձևով նպաստելու իր ազգին, իր հայկական պետությանը, որպեսզի նա կարողանա լոյալ և բարեկամական հարաբերություններ պահպանի բոլոր ազգերի և պետությունների հետ, որովհետև միայն խաղաղությունն է ապահովում մարդու ստեղծագործական, շինարարական, ուսումնագիտական և այլ գործունեությունների ծավալմանը, հանգիստ ապրելուն և ուժեղանալուն: Այդ կապակցությամբ ԱՄՆ-ի հիմնադիր Ջորջ Վաշինգտոնը ասել է. «Այն ազգը, որը մշտական ատելության կամ մշտական համակրանքի զգացում է տաժում հանդեպ ուրիշ ազգի, ինչ-որ տեղ դառնում է իր չարության կամ հակավաճության ստրուկը, դրանցից յուրաքանչյուրը բավական է նրան շեղելու իր պարտականություններից և շահից»: Լավ է ասված, բայց ինչպես անել... Հավանաբար պետությունը պետք է ունենա այնպիսի ղեկավարներ կամ իշխանավորներ, ովքեր լինեն բնականից խելացի, բարոյականապես մաքուր, քաղաքականապես պատրաստված, գործունեությամբ արդար, ազնիվ ու շիտակ: Այդ և այլ կարևոր հատկանիշների բնութագրերը տրվել են շատ մեծամեծ մտածողների, փիլիսոփաների, գիտնականների կողմից, որոնք իրենց նշանակությունը և իմաստը չեն կորցրել և երբեք չեն հնամում: Օրինակ, Կոնֆուցիուսը մարդկանց բաժանում է հասարակների և կատարյալների, որոնցից ըստ նրա հասարակների համար կյանքում կարևորը նյութականն է և սեփական շահը, կատարյալների համար կարևորը ներքին հոգևոր արժեքն է և հավատարիմ լինելը իր պարտականություններին: Կատարյալ մարդիկ ըստ Կոնֆուցիուսի խոսքի մեջ խոհուն և դանդաղ են, գործի մեջ՝ արագ և խելացի: Այդպիսիներն ունեն 4 կարևոր հատկանիշ՝ քաղաքավարի վերաբերմունք, հավատարիմ ծառայություն, պատրաստ կյանքը տալու իր ժողովրդին, շիտակ ու ազնիվ արարքներ: Եվ ըստ Կոնֆուցիուսի այդպիսիները պետք է լինեն հասարակության մեջ ղեկավար պաշտոններում, որովհետև նրանք իրենց ուժերը նվիրաբերում են հասարակական կյանքի հիմքերը ամրապնդելուն, իրենց պահում են բոլորի և հավատարու նման, պահպանում են ամեն ինչի չափը, կյանքում չեն ձգտում հարմարավետության, ունեն բարոյականության հիմնական չափանիշները՝ քաղաքավարություն, մեծահոգություն, անկեղծություն, եռանդ, բարություն: Արդյո՞ք նոր ժամանակներում նշված այդ լավ բաները միասին լինում են, դժվար է ասել... Ամեն դեպքում պետք է դրան ձգտել: Գիտելիքների հետ կապված, մարդկանց մասին ֆրանսիացի լուսավորիչ Ժան Ժակ Ռուսոն հետևյալն է գրել. «Մարդիկ որքան քիչ են իմանում, այնքան նրանց ընդարձակ են թվում իրենց գիտելիքները»: Սակայն այդպիսիները մոյմիսկ շատ հասարակ հարցեր չեն կարողանում միասին լուծել: Իսպանացի մեծ սատիրիկ գրող Սերվանտեսը գրել է. «Պետության մեջ ծուլ և դատարկ մարդիկ նման են փեթակի բռնեղին, որոնք խոխոն են աշխատող մեղուների մեղրը»:

Մեր երկրի իշխանավորները պետք է հիշեն գիտնականներին և նրանց կողմից կատարվող գիտությունները, շարունակաբար պահպանեն և զարգացնեն՝ որպես պետության և ժողովրդի թանկարժեք և ան-

փոխարինելի մասունք, հանուն մեր հայ ազգի հավերժ գոյության և համայն հայության համազգային բարգավաճման: Ցանկալի է նաև, որ պետությունն էլ առաջադրի երկրին անհրաժեշտ գիտաարտադրական խնդիրներ և պահանջի լուծել դրանք: Մեր Մայր համալսարանի, ակադեմիական և բուհական ինստիտուտների եղած ուսումնական և գիտական աշխատանքային սենյակները պետք է մշտապես գործեն, որտեղ անընդհատ իրենց մկրտությունը և ուսումնագիտական զարգացում են ստացել և ստանում են հայ ժողովրդի երիտասարդ առաջադեմ սերունդը՝ բարձր մակարդակի, նաև խոշոր գիտնականների և պրոֆեսորների օգնությամբ ու ղեկավարությամբ: Մասնավորապես, քիմիական գիտահետազոտական և ուսումնագիտական լաբորատորիաները կդատարկվեն, եթե բազային, հիմնարար թեմաների ֆինանսավորում չկատարվի, իսկ թանկարժեք գործիքները և սարքերը կմնան անօգտագործելի, ուսանողների ավարտական և դիպլոմային աշխատանքները կմնան անկատար ու կկազմալուծվի նաև ուսումնական լաբորատոր դասավանդումը, իսկ լքյալ լաբորատոր և ուսումնական սենյակները այլ նպատակների համար կդառնան անօգտագործելի կամ շահանդ որոշ մարդկանց սեփականությունը: Նշենք, որ ՀՀ բոլոր ղեկավարները 1919-1991 թթ. նպաստել և օժանդակել են բոլոր հնարավոր միջոցներով ՀՀ-ում քիմիայի (նաև մյուս գիտությունների) զարգացմանը՝ ուսման, գիտության, արդյունաբերության բնագավառներում, անկախ երկրի սոցիալ-տնտեսական, ռազմական և քաղաքական վիճակներից: ՀՀ-ում՝ քիմիական կրթությունը և արդյունաբերությունը հասան շատ բարձր մակարդակի ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլ նաև միջազգային չափանիշներով: Ստեղծվեցին ուսումնական թափանցիկ, գիտահետազոտական, արդյունաբերաարտադրական կենտրոններ Երևանում և ՀՀ այլ քաղաքներում ու վայրերում: ԵՊՀ, պոլիտեխնիկական, բժշկական, մանկավարժական, տնտեսագիտական ինստիտուտները դարձան ոչ միայն ուսումնական թափանցիկ, այլ նաև գիտական կենտրոններ: Գիտահետազոտական ԳԱ քիմիայի ինստիտուտները դարձան ԽՍՀՄ և միջազգային չափանիշներով գիտահետազոտական կենտրոններ: Կառուցվեցին քիմիական գիտան գործարաններ, համամիութենական և համաշխարհային նշանակության արտադրական հիմնարկ-ձեռնարկություններ, ինչպիսիք էին՝ Երևանի կաուչուկի «Նաիրիտ» արտադրական միավորումը, որը ԽՍՀՄ ամենահզոր արտադրական կենտրոններից մեկն էր, Կիրովականի քիմիական կոմբինատը, «Կանազ» ալյումինի գործարանը, Ալավերդու պղնձածուխական գործարանը, Երևանի «Պոլիմիդիլացետա» գործարանը և այլք: Քիմիական արտադրության զարգացման շնորհիվ՝ մեր երկիրը դարձել էր ԽՍՀՄ-ի ամենահարուստ և ամենածաղկուն հանրապետություններից մեկը, միջազգային մակարդակի երկիր: Ափսոս, որ կորցրինք...

Այնուամենայնիվ մեր հանրապետությունում դեռևս շարունակում են գործել ուսումնական բարձրագույն հաստատություններ, ԳԱ մասկին հզոր ու ճանաչված, բայց ներկյույմս փոքր թվով աշխատակիցներով, սակայն նպատակասլաց ու արդյունավետ գործող գիտահետազոտական ինստիտուտները: Պետք է հատուկ շեշտել, որ ՀՀ-ում կրթության, գիտության և արդյունաբերության ձևավորումը, զարգացումը և կիրառումը ՀՀ ստեղծումից



սկսած հիմնականում իրականացվել է ԵՊՀ-ում, որն առանձնապես դրսևորվել է քիմիա մասնագիտության ուղղությամբ: Հայաստանյան բոլոր իշխանավորները մշտապես առանձնակի ուշադրություն են տածել ԵՊՀ-ի հանդեպ, մեծարել որպես ԽՍՀՄ-ի լավագույն համալսարաններից մեկը, հաշվի են առել համալսարանի կարծիքը որպես հիմնարար ուսումնագիտական հաստատության, ինչու չէ՞ նաև քաղաքական և երկրի կարևոր հարցերի քննարկման ու լուծման ժամանակ: Չենք կարծում, թե ներկայիս համալսարանում պահել իր ժողովրդին, աշխարհից վերանում է: Իսկ գիտության մասին շատ դիպուկ է արտահայտվել. «Գիտությունը անհրաժեշտ է ժողովրդին, այն երկիրը, որ դա չի զարգացնում անխուսափելիորեն վերածվում է գաղութի»:

ՀՀ-ում գիտությունը և կրթությունը անկասկած պետք է շարունակ գոյատևեն ու զարգանան համուն մեր հայրենիքի հզորության: Հայ ժողովրդի սիրելի և պաշտելի բանաստեղծ Ավետիս Իսահակյանը տեսեք ինչ գեղեցիկ է խոսել գիտության մասին. «Մեր ամբողջ գիտությունը և հազար դարեր հետո ձեռք բերված գիտությունը և, մի կամքով է տիեզերական խորհուրդների անձին խավարի մեջ»: Այո, գիտությունը բնության և մարդկության ամենամեծագույն կանթեղն է, որը հավերժորեն պետք է բոցավառի և լուսավորի հայի ուղին և ոգին Մայր Հայաստանում մեր Հայրենիքում, որը առանց գիտության և կրթության չի կարող գոյություն ունենալ: Ազգն ապրում և գոյատևում է իր մշակութով, գիտությամբ և կրթությամբ:

Ակնարկի վերջում բերենք Ավետիք Իսահակյանի խոսքը նաև Հայրենիքի մասին. «Սուրբ է Հայրենիքը, Նա մեր հացն է, մայրական գիրկը, մեր մանկությունն է նա, մեր պապի գերեզմանն է և մեր մանուկների գվաթն օրորոցը: Նա մեր տարեգիրն է, մեր հին ու նոր քնարը: Նա հայրական տան ծուխն է, որ մեր հրճվածքը ու վիշտը տանում է աստղերին: Հայրենիքը լեզուն է, նա է միացնում անցյալը, ներկան և ապագան, մեռածն ու ապրողը, նա է հավերժացնում ազգը, շտեմարանում ազգի հոգևոր գանձերը»:

**Սերգեյ Կոստանդի ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
**Քիմիական գիտությունների**  
**դոկտոր, պրոֆեսոր**  
**Ռոմիկ Սուրենի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
**Քիմիական գիտությունների**  
**դոկտոր, պրոֆեսոր**

# Արմապրներով Ղարաբաղցիներ



Լազար Իվան (Յովհաննես) Դավթի (1820-1879), գեներալ-լեյտենանտ (1866)



Մելիք-Շահինգարով Պավել Ջումշուդի (1854-1910), գեներալ-լեյտենանտ (1919)



Շելկունդիկով Բորիս Մարտինի (1837-1878), գեներալ-մայոր (1876)



Բաղրամյան Յովհաննես Քրիստափորի (1897-1982), ԽՍՀՄ մարշալ (1955), ԽՍՀ կրկնակի հերոս (1944, 1977)



Իսակով Յովհաննես (Իվան) Ստեփանի (1894-1967), Սովետական Միության ծովակալ, ԽՄ Կերոս (1965)



Սահաքյան Վալերիան (Ռոստոմ) Գրիգորի (1782-1829), գեներալ-լեյտենանտ (1826)



Փիրումյան Դանիել Բեկ Աբխողոմովի (1861-1922), գեներալ-մայոր (1918)



Ավթանդիլյան Արսեն Մարկոսի (1910-1986), գվարդիայի գեներալ-մայոր (1955)



Բաբաջանյան Յամագասպ Խաչատուրի (1906-1977), ԽՍՀՄ ՁՈՒ գրահատանկային զորքերի գլխավոր մարշալ (1975), ԽՄ Կերոս (1944)



Խամփարյան Արմենակ Արտեմի (Խուդյակով Սերգեյ Ալեքսանդրի, 1902-1950), ԽՍՀՄ ավիացիայի գլխավոր մարշալ




Մելիք-Շահինգարով Միխայիլ Մեծկունի (1838-1910), գեներալ-մայոր (1890)




Փիրումյան Պողոս Բեկ Կարապետի (1856-1921), գեներալ-մայոր (1918)



Ստեփանյան Նելսոն Գևորգի (1913-1944), օդաչու, կապիտան, ԽՍՀՄ կրկնակի հերոս



Պարսեղով Միխայիլ Արտեմի (1899-1964), Կերոս (1958), ԽՄ Կերոս (1940)



## «ԱՐՄԱՐՏՖԵՍ». ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

➤ Զանովի, Գայանե Խաչատրյանի, Երվանդ Քոչարի, Ժանսեմի և շատ այլ հեղինակների գործերի բացառիկ մոտիվներ:

ՈՂ-ում ԶԳ դեսպանատան շենքը, իր հիմնական գործառնություններից բացի, նաև մշակութային կենտրոն է, մեր պատմության ու մեր մեծերի թողած ավանդի ներկայացման տեղը, և հաճախակի կազմակերպվող միջոցառումների օրերին հյուրերը շրջում են դեսպանատան դահլիճներում, ծանոթանում խնամքով պատրաստված ցուցադրություններին՝ որտեղ բացառիկ լուսանկարներ են, կտավներ, ձեռագրեր, նոտաներ, մեր մի շարք մեծերի անձնական իրերից...

«Արմարտֆեստ» անունը կրող այս փառատոնը համառոտապատմական առաջին փառատոնն է՝ նվիրված հայ մշակույթին: Այս միջոցառման շրջանակներում փորձ է արվել համախմբել Ռուսաստանում գործունեություն ծավալող լավագույն հայ արվեստագետներին բոլոր ոլորտներում՝ գեղանկարչություն, քանդակագործություն, կինո, թատրոն, գրականություն, դիզայն և այլն:

Փորձ է արվում Ռուսաստանում ներկայացնել հայ մշակույթն իր ամենաբարձր տեսակով ու ճաշակով և ընդգծել այն իրողությունը, որ ՈՂ-ում ապրող հայ արվեստագետներն իրենց գործունեությամբ կարևորում են հայ-ռուսական բարեկամությունը պահպանելու, զարգացնելու և ամրապնդելու գաղափարը:

Փառատոնի յուրաքանչյուր օրը նվիրված էր մի ոլորտի: Առաջին օրը բացվեց երկու ցուցահանդես՝ ժամանակակից արվեստի ցուցահանդեսը, որտեղ ռուսաստանաբնակ 30 հայ նկարիչների մեկական գործերն են, և «Արտ» սրահում՝ «Ժամանակակից» ցուցահանդեսը, որտեղ ներկայացված են հայ կերպարվեստի մեր մեծերը:

Հաջորդիվ՝ հայ պարարվեստի օրն էր, մյուս օրը ցուցադրվեցին դեկորատիվ կիրառական արվեստի գործեր՝ կերամիկա, դիզայն, տարազներ, գորգեր և այլն:

Այնուհետև հաջորդեց մանկական արվեստի օրը, մշակութային կենտրոնն ամբողջությամբ նվիրված էր երեխաների ստեղծագործական գործունեությանը:

Փառատոնի ամենաերիտասարդ հյուրերը, մեր «Նռան հատիկները» ստուդիայի մշտական ներկայացուցիչների հետ միասին, ընկղմվեցին կուլաժի աշխարհում, և մասնակիցներից յուրաքանչյուրը ստեղծեց Յայաստանի իր ուրույն պատկերը:

Հաջորդը հայ խոհանոցի օրն էր, իհարկե, հայ խոհանոցը որպես արվեստ, որպես հյուրասիրության արվեստ և մշակույթ:

Այնուհետև հաջորդեց ճարտարապետների օրը, որտեղ ներկայացվեցին ոչ միայն հայ լավագույն ճարտարապետները, որոնք ապրել և գործել են Մոսկվայում, այլ նաև ռուս պրոֆեսորներ, ակադեմիկոսներ, նրանցից մեկը Ալեքսեյ Իվանովն է, հայտնի ակադեմիկոս, ճարտարապետ, որը իր աշխատանքներում անդրադարձել է Գյումրիի ճարտարապետությանը և ստեղծել է հայկական ճարտարապետության առանձնահատկություններին նվիրված գիրք, որի շնորհանդեսը կայացավ միջոցառման ընթացքում:

Փառատոնի փակումը տեղի ունեցավ դեսպանատան մեծ դահլիճում, իսկ Լազարյան ճեմարանի հանրաճանաչ բակում կայացավ շատ հետաքրքրական միջոցառում՝ երաժշտությամբ,

ջազով:

Այնուհետև դեսպանատան դահլիճում տեղի ունեցավ գալա-համերգ, որին մասնակցեցին մեր լավագույն երաժիշտները, ճանաչված երգիչ երգչուհիները, ինչպես նաև Յայաստանից մեր պատվավոր հյուրերը՝ «Վան» կվարտետը և հանրաճանաչ Վահագն Յայրապետյանը:

Մոսկվայում յուրօրինակ ու բազմակտավ անդրանիկ փառատոնն ավարտվեց, իսկ մշակութային տոնը մտադրացողներն ու կազմակերպիչները՝ դեսպան Վարդան Տողանյանն ու դեսպանության մշակույթի կենտրոնի ղեկավար Վլադիմիր Գաբբեն՝ իրենց համախոհների հետ միասին, շարունակում են ծավալել իրենց հայրենանվեր գործունեությունը՝ Ռուսաստանի Դաշնությունում հայ մշակույթը ներկայացնելու, մեր մեծերին ճանաչելի դարձնելու, ըստ արժանվույն գնահատելու, ինչպես նաև հայ-ռուսական մշակութային կապերը զարգացնելու և ամրապնդելու ուղղությամբ:





ՀԱՄԱՐԶՈՒՄ ՊԵՐՊԵՐՅԱՆ.

## ԵՂԵՌՆԻՑ ՓՐԿՎԱԾ ԵՐԱԺԻՇՏԸ

**Յարգելի Պր. Համբարձում Պերպերյան,**  
«Ստացայ Ձեր ինձի որկած երաժշտական գիրքերը: Շնորհակալություն այդ պատիվի համար:

**Ուսումնասիրելով Ձեր փարդիսիոնները (գործերը), բառականաչափ եզրակացություն ունեմ Ձեր գործերի մասին: Իմ կարծիքով շատ հետաքրքիր, շատ փորձեսիոնալ եւ շատ հարուստ գործեր են: Մեծապես գովասանելի է, որ արեւելեան երաժշտական ոճը շատ նկատելի է դիրալի է Ձեր գործերի մեջ. մասնաւոր՝ հայկական սրմատը: Յաջողություն եւ առողջություն»:**

Այս տողերը գրել է Արամ Խաչատրյանը Մոսկվայից 1977 թ. դեկտեմբերի 19-ի իր նամակում, որը հասցեագրված էր սփյուռքահայ կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ և երաժշտական-հասարակական գործիչ Համբարձում Պերպերյանին (1905-1999):

Դժվար է ասել, թե ինչպես կդասավորվեր Հ. Պերպերյանի ստեղծագործական ճակատագիրը, եթե այն դաժամաբար «չսրբագրեր» Հայոց մեծ եղեռնը:

Հ. Պերպերյանը ծնվել է 1905 թ. մայիսի 25-ին, Ադանայում:

Հազիվ տասը տարեկան էր Հ. Պերպերյանը, երբ «մի օր եկան, 72 հարազատների կռները պարաններով միմյանց կապեցին ու սվինների տակ քայլեցրին դեպի անապատ:

- Համբարձում, դու քիչ մը կողքով, ինձի կպած քալե, Համբարձում, կծկվե, գուցե գնդակը քեզի չդիպի,- կրկնում էր մեծ եղբայրը լալահառաչ ծայրով:

- Ինչպե՞ս, մի՞թե պիտի գնդակահարենք»:

Հոգնատանց քայլերով առաջ գնացող մանչուկը չէր կարող պատկերացնել, թե ինչ է սպասում իրեն: «Հեռվում երևաց Եփրատը. ջրերը հեռում էին, կոհակները զարնվում ու զարնվում... Ու զարնվեցին Եփրատի ափին անմեղ մեղավորները: Անշնչացած մարդկանց թուլացած շղթան գետին տապալկվեց... Մամուկն էլ ընկավ: «Ձարնվեցինք,- մտածում էր նա:- Բայց ինչո՞ւ չեմ մեռնում, ինչո՞ւ զգում եմ, հա, երևի դեռ տաք եմ, հիմի պիտի մեռնիմ»»:

Նահատակների կողքով անցնում են դահիճները՝ սվինները մխրճելով անշնչացած մարմինների մեջ, ստուգելով՝ արդյոք բոլորին են սպանել: Փոքրիկ Համբարձումն զգում է սվինի քերծվածքը ոտքի վրա...

Որոշ ժամանակ անց մանչուկը գիտակցում է, որ չի սպանվել, հրաշքով ողջ է մնացել: Փորձում է բարձրանալ, բայց թևերը կապկպված էին. նա կրծում է պա-

րանները, քանդում կապանքները և ծունկի ելնելով՝ սողում: Մանչուկը հայտնվում է Հալեպի ամերիկյան որբանոցում: Շուտով որբերին տանում են Թուրքիա՝ ազգուրաց դարձնելու: Այս անգամ էլ Համբարձումը խուսափում է. նա սրընթաց գնացքից նետվում է անապատ...

1923-ին Հ. Պերպերյանն ընդունվում է Աթենքի պետական կոնսերվատորիան, որն ավարտում է 1930-ին որպես ջութակահար, խմբավար և կոմպոզիտոր և նվիրվում երաժշտական-մանկավարժական ու համերգային գործունեությանը:

1933-1963 թթ. Հ. Պերպերյանը բազմակողմանի երաժշտական-հասարակական գործունեություն է ծավալում Բեյրութում. հիմնում է երգչախումբ, մանկական երգեցիկ խումբ և պարի անսամբլ՝ երկար տարիներ ղեկավարելով դրանք: Նա էր

յի հայ գաղթավայրերի ՀԲԸՄ-ի ընդհանուր երաժշտական ղեկավարն ու տնօրենը: Նա Տիգրան Չուխաճյանի «Կարինե» ներկայացրել է նաև Բոստոնում և Լոս Անջելեսում:

Հ. Պերպերյանը համերգներով հանդես է գալիս Նյու Յորքում, Բոստոնում, Պրովիդենսում, Ֆիլադելֆիայում, Դետրոյտում, Քլիվլենդում, Չիկագոյում, Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում, Մոնրեալում և Մոնտեվիդեոյում:

Իր երաժշտական-մանկավարժական ու համերգային բեղմնավոր գործունեությանը զուգահեռ Հ. Պերպերյանը միաժամանակ ստեղծագործել է: Նրա «ստեղծագործությունն աչքի է ընկնում ազգային վառ ինքնատիպութեամբ, ինտոնացիոն եւ ռիթմական հետաքրքիր շաղախով, լադային-պոլիֆոնիկ ատաղծով, ջերմ զգա-

րենագրկված Հ. Պերպերյանն ամբողջ կյանքում մի առանձին վերաբերմունք ուներ հայրենիքի հանդեպ, ինչը դրսևորվեց նաև ստեղծագործության մեջ: Այս առումով հատկանշական են հատկապես նրա վոկալ-սիմֆոնիկ գործերից «Եկեղեցին հայկական» օրատորիան, «Խորհուրդ Վարդանանց» կանտատը, «Նաիրյան խմբերգեր» շարքը...

«Պերպերյանի գործունեությանը ոգի ու կորով ներշնչողը եղել է ու կա իր մայր հայրենիքը, իր ժողովուրդը: Նրա տարիների փայփայած երազն էր օր մը հայրենի երդիկին տակ հնչեցնել իր հայրենակարոտ երկերը: Ու երազն այդ իրականություն էր դառնում... Սպասումների ու երջանկության, երազանքների ու բաղձանքների, անհուն կարոտի ու հրժանքի հույզերը ալեկոծվում, փոթորկվում էին նրա կրծքի տակ... Աչքերը մշուշվեցին, կոպերը ծանրացան... շուրթերից մի ակ պոկվեց, երկու տաք շիթ գլորվեցին այտերի վրայով... Նա տեսավ մայր երկիրը, նա իջավ հայրենի հողի վրա... համբուրեց հողը, հետո ողջագուրվեց դիմավորողների հետ:

Նա պատվավոր հյուր եղավ մայր հայրենիքում ծննդյան ու վերածննդի 40-րդ տարեդարձի հանդիսություններին»:

Պերպերյանն սկսում է պատրաստվել երևանում իր հեղինակային համերգին: Նախապատրաստական աշխատանքները տևում են 15 օր: Եվ ահավասիկ 1961 թ. հունիսի 9-ին տեղի է ունենում սփյուռքահայ կոմպոզիտորի անդրանիկ համերգը հայրենիքում:

Վերադառնալով Բեյրութ՝ 1961թ. հունիսի 27-ի նամակում նա գրում է՝ «Հայրենիքեն քաղած տպավորություններս սքանչելի ու անմոռանալի հիշատակներով քանդակված են հոգիիս խորքը, որոնք կրկին ու կրկին կը փոխադրեն զիս հոգն՝ խանդավառվելու համար ներկայի հերոսական աշխատանքներով, իրականացած հրաշալիքներով և թե ապագայի շատ ավելի փայլուն իրագործումներու հեռանկարներով:

Ոտքիդ տակ հարազատ հողին տվածը Սայաթ-Նովայի գոհար խոսքով «ուրիշ դիդ է»:

Հայրենիքի աշխատանքային ծրագիրը ես կը նմանեցնեմ Կոմիտասյան ուժեղ ներդաշնակությանը կառուցված խմբերգի մը, որուն կատարումի ընթացքին առաջ եկած կեղծ, անմաքուր ծայնալիքները չեն կրնար խանգարել հիմնականը:

Հոյակապ ու նոր սիմֆոնի մը հորինելու աշխատանքին լծված է մեր քառասնամյա շինարար ժողովուրդը: Մաղթենք, որ այդ համանվագը ամբողջաճախաղաղության ճանապարհով»:

1961-ից հետո Հ. Պերպերյանը հեղինակային համերգներով Հայաստան այցելեց նաև 1978-ին և 1982-ին «Եւ Երեւանի Ֆիլհարմոնիայի Դահլիճին մեջ նուագահանդեսներ կուտայ՝ արժանանալով հայրենաբնակ ծանօթ երաժիշտներու եւ արուեստագետներու բարձր գնահատանքին ու ժողովուրդի հիացման»:

1974 թ. նշվում է «Հ. Պերպերյանի երաժշտական-ստեղծագործական գործունեության 50-ամեակը՝ իբրեւ ազգային երաժշտական մշակույթի զարգացման նշանակալից իրադարձութիւն», իսկ 1979 թ. հունիսի 17-ին, կիրակի, Թեքեյան մշակութային միությունը կազմակերպում է հորելյանական հանդիսություն՝ նվիրված Համբարձում Պերպերյանի ազգային և երաժշտական գործունեության 50-ամյակին, նախագահությամբ՝ Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի: Բացման խոսքով հանդես է գալիս Նուբար Պերպերյանը: Հ. Պերպերյանի Թավջութակի մենամկագով ելույթ է ունենում Վահե Պերպերյանը, որին հաջորդում է Ռուբեն Գրիգորյանի բանախոսությունը: Կոմպոզիտորի մեներգերի կատարմամբ հանդես է գալիս Լիլի Չուգասյանը՝ Արման Բոյաջյանի նվա-

➤8

բոլոր երաժշտական հանդեսների կազմակերպիչն ու ղեկավարը: Լիբանանում առաջին անգամ նա ներկայացրել է Արմեն Տիգրանյանի «Անուշ» և Տիգրան Չուխաճյանի «Կարինե» (ի դեպ՝ ներկայացման մեջ, որը կրկնվել է 10 անգամ, գլխավոր հերոսուհու դերերգը կատարել է Հ. Պերպերյանի դուստրը՝ դեռևս Բեյրութի երաժշտամոցի սան Նաիրին) օպերաները, ինչպես նաև իր «Արեգմազան» և «Մամուկը բնության մեջ» օպերաները:

1956 թ. մայիսի 27-ին Հ. Պերպերյանը կազմակերպում է հայ երաժշտությանը նվիրված փառատոն: Այդ օրը լիբանանյան կառավարությունը նրան պարգևատրում է արվեստի Ա կարգի ոսկյա շքանշանով:

Տասնամյակներ շարունակ Հ. Պերպերյանը որպես երաժշտության ոսուցիչ դասավանդել է Հ.Բ.Ը. Միության Հովակիմյան-Մանուկյան և Դարուհի Հակոբյան վարժարաններում, ճեմարանում, Մխիթարյան վարժարանում, Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքում, Սահակյան վարժարանում, ինչպես նաև Կիլիկյան և Մխիթարյան վարժարաններում և ամերիկյան քոլեջում:

Միաժամանակ, որպես կոմպոզիտոր և խմբավար Հ. Պերպերյանը մեծ ճանաչում է ձեռք բերում Բեյրութում, Տրիպոլիում, Հալեպում, Լաթաքիայում, Դամասկոսում, Երուսաղեմում, Աթենքում, Պոլսում, Կահիրեում, Ալեքսանդրիայում, Նիկոսիայում և Լառնակայում կազմակերպած իր հայրենամաշինչ երգահանդեսներով:

1963-ին Հ. Պերպերյանը տեղափոխվում է ԱՄՆ, դառնում ԱՄՆ-ի և Կանադա-



ցումով»:


Երաժշտական թատրոնի համար նրա ստեղծագործություններից առաջինը «Թիթեռ» կամ «Մամուկն ու բնությունը» մանկական օպերա-բալետն է՝ գրած 1934-ին (լիբրետոն՝ Բ. Ժորայի): Երկրորդ՝ երեք արարից բաղկացած, «Շողիկ» օպերան է (1939), որի համար հիմք է ծառայել Հ. Թումանյանի «Երկրում» պոեմը:

Երրորդ օպերան՝ «Արեգմազան» օպերա-կանտատը, գրել է Հ. Թումանյանի «Թմկաբերդի առունը» պոեմի հիման վրա, 1940-ին: Օպերան անվանել է հերոսուհու անունով: Պերպերյանը տեղյակ չի եղել Ա.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի գոյության մասին:

Ց. Բրուստյանին հասցեագրված իր վերջին՝ 1995 թ. օգոստոսի 7-ով թվագրված նամակում 90-ամյա կոմպոզիտորը հայտնում է, թե «...Աւարտեցի չորրորդ՝ «Թամար» օպերաս, ինչպես նաև Սիամանթի Ս. Մեսրոպը իբրեւ օրատորիոյ, տետրոլթեմը երկու ժամ...»:

Անհոգ մանկությունից ու պատանեկությունից նենգաբար զրկված, որք մեծացած Համբարձումը հետագայում իր ողջ ստեղծագործական կյանքում մի անշեջ ջերմություն պահպանեց մանուկների հանդեպ: Մեծ է նրա ծառայությունը հատկապես մանկական երգչախմբերի ստեղծման, հայ մանուկներին երաժշտական արվեստին հաղորդակից դարձնելու գործում: Նա հեղինակ է մանուկների համար գրված բազմաթիվ մանկական երգերի: Մանուկների համար է գրել իր առաջին օպերան՝ «Թիթեռ» կամ «Մամուկն ու բնությունը» մանկական օպերա-բալետը, որը բեմադրվել է Բեյրութում և Ֆիլադելֆիայում:

Ընդամենը տասը տարեկանում հայ-





ՄԻԼՎԱ ՄՐԱՊԻՈՒՆԻ  
ՍԱՀԱԿՅԱՆԽՈՍՔ  
ՀԻՇԱՏԱԿԻ

2021 թ. հունիսի 30-ին վախճանվեց հրատարակչության երկարամյա և վաստակաշատ աշխատակից Միլվա Սրապիոնի Սահակյանը, որն իր կյանքի ավելի քան կես դարը անմնացորդ նվիրեց ակադեմիական գրահրատարակչությանը:

Ս. Սահակյանը ծնվել է 1945 թ. փետրվարի 16-ին Երևանում: 1963-68 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: 1969 թ. ընդունվել է աշխատանքի գիտությունների ակադեմիայի «Քիմիական հանդեսում» որպես ավագ խմբագիր: 1988 թ. մինչև կյանքի վերջը եղել է «Հայկական քիմիական հանդեսի» պատասխանատու քարտուղարը: Այդ պաշտոնում աշխատելով ավելի քան 33 տարի՝ Ս. Սահակյանը լուրջ ներդրում ունեցավ հանդեսի հրատարակչության գործում, մասնավորապես 90-ական թթ. անցումային շրջանում: Աշխատանքային գործունեության ընթացքում մարդկային բարձր հատկանիշների և մասնագիտական փորձառության շնորհիվ նա կարողացավ ձեռք բերել հանրապետության քիմիական գիտական հանրության ճանաչումն ու հարգանքը:

Իրեն վստահված գործի հանդեպ անմնացորդ նվիրվածության և բարձր պատասխանատվության մասին է վկայում այն փաստը, որ հիվանդանոցում, գտնվելով ծայրահեղ ծանր վիճակում, Միլվա Սահակյանը ցանկացել էր տեսնել հանդեսի իր պատրաստած վերջին համարի ազդորդական և խնդրել էր հրատարակչության իր գործընկերներին՝ տպաքանակի օրինակները ուղարկել համապատասխան հասցեատերերին:

Ս. Սահակյանը պրոֆեսիոնալ բարձր հատկանիշներով օժտված, սկզբունքային և կենսափնիդ անձնավորություն էր: Նա զբաղվում էր նաև ակտիվ հասարակական գործունեությամբ. ավելի քան քսան տարի ղեկավարել է հրատարակչության արհմիութենական կոմիտեի աշխատանքները: Միլվա Սահակյանը երկարամյա արդյունավետ աշխատանքի համար արժանացել է ԳԱԱ նախագահության «Պատվոգրի» և «Վաստակագրի»:

Մեր սիրելի գործընկերոջ հիշատակը միշտ վառ կմնա բոլորիս սրտերում:

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

## ԵՂԵՌՆԻՑ ՓՐԿՎԱԾ ԵՐԱԺԻՇՏԸ

Պրակտիկայում: Մամբրե քահանա Գուգույանը ընթերցում է Հայրապետական կոնդակը, որին հաջորդում է Հ. Պերպերյանին Ս. Ներսես Շնորհալի շքանշանի հանձնումը: Եզրափակիչ խոսքով հանդես է գալիս Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

«Համբարձում Պերպերյանի արուեստը հանգրուան առ հանգրուան բիրտեղացաւ, ճոխացաւ ու զեղեցկացաւ՝ հասնելու համար նախանձելի բարձունքներու: Իր գեղարուեստական գործունեութեան յիսուն տարիներուն ընթացքին, վարպետը հասցուցած է մեծ թիւով աշակերտներ, որոնք այսօր կը գրաւեն կարեւոր դիրքեր երաժշտութեան եւ մշակոյթի ասպարեզներէն մերս»:

1990 թ. նոյեմբեր 25-ին Մոնրեալի Ս. Գրիգոր Լուսավորչի Առաջնորդանիստ Մայր եկեղեցում մշակել է նրա 60-ամեայ բազմաժամկետ գործունեութեան հոբելյանը, «ուր եւ նրան յանձնեց Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Առաջինի շնորհաւորանքը՝ սրբատառ կոնդակով»:

Մեծ եղեռնի 60-ամյա տարելիցի կապակցությամբ կոմպոզիտորը 1972-ին գրել է «Requiem Aeternam»-ը (Կոմիտասի հիշատակին)՝ Չարենցի համանուն ստեղծագործության հիման վրա (տեքստը՝ հայերեն և անգլերեն), որը 1975-ին կատարվել է Դետրոյտում, ամերիկյան պրոֆեսիոնալ երգչախմբի կատարմամբ և արժանացել ջերմ ընդունելության: «Requiem»-ը հնչել է նաև Երևանում, հեղինակի ղեկավարությամբ: Ի դեպ սա առաջին ռեքվիեմն է աշխարհիկ տեքստով: «Նրա «Requiem Aeternam»-ը 1980-1981 թթ. համերգաշրջանում ամերիկեան եւ անգլիական երգչախմբերով ու նուագախմբով կատարուել է ԱՄՆ-ում ու Անգլիայում: Վաստակաշատ կոմպոզիտորին, խմբավարին ու երաժշտական-հասարակական գործչին առաջինը շնորհեց Հայաստանի կոմպոզիտորների միութեան «Կոմիտաս» մրցանակը՝ 1981 թուականին: Այդ առիթով նա Երեւանում ղեկավարեց իր «Requiem Aeternam»-ը»:

«Requime Aeternam»-ի նուտաները 1982-ին կոմպոզիտորն իր մակագրությամբ նվիրել է «Հայաստանի գրականութեան և արուեստի պետական թանգարանին»:

Երաժիշտն իր հարկի տակ ունեցավ երաժշտական ընտանեկան յուրահատուկ կվարտետ՝ տիկին Սրբուհին և դուստրը՝ Նաիրին՝ երգչուհիներ, որոնցից Չրաչը՝ ջութակահար և Վահեն՝ թավջութակահար: ...Հ. Պերպերյանի արխիվը գտնվում է Երևանում՝ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում: Մինչ օրս նրա ստեղծագործության վերաբերյալ չկա հիմնարար ուսումնասիրություն, իսկ նրա գործերը խոնարհաբար սպասում են, թե երբ պիտի հնչեն հայրենիքում և տեղ գտնեն հայ կատարողների երկացանկում:

ԱՆՆԱ ԱՍԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

## ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ


Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյանի կողմից ՀՀ կառավարություն ներկայացրած կիրառական առաջարկությունները 2008-2020 թթ. ընթացքում գիրքը, 248 էջ ծավալով: Այն տպագրվել է տնտեսագիտության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ: Գրքի գիտական խմբագիրներն են՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգորի Վահանյանը և տնտեսագիտության թեկնածու Լիլիթ Սարգսյանը: Որպես գրախոսներ հանդես են եկել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Սարիյանը և տնտեսագիտության թեկնածու, որցենտ Քրիստինե Բաղդասարյանը:

Ժողովածուում ամփոփվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում 2006-2020 թթ. ընթացքում Վլադիմիր Հարությունյան-

նի կողմից կատարված հետազոտական աշխատանքները, որոնցից բխող կիրառական առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարությանը: Դրանք արդիական են և կարող են օգտակար լինել ՀՀ գործող և ապագա կառավարությանը ռազմավարական տարբեր խնդիրներ լուծելու համար:

Հարկ է նշել, որ այդ առաջարկություններից չատերը այս կամ այն չափով օրենսդրական ուժ են ստացել: Առաջարկությունները կիրառման դեպքում կնպաստեն Հայաստանի տնտեսության զարգացմանը, անվտանգության ամրապնդմանը և բնակչության բարեկեցության բարձրացմանը:

Գիրքը կարդացվում է հետաքրքրությամբ և կարող է օգտակար լինել ոչ միայն օրենսդրական հարցերով զբաղվող ղեկավարների, այլ նաև տնտեսագետների և ուսանողների համար: Գրքի տպաքանակը 100 օրինակ է:



Հարունակելով հայալեզու մասնագիտական գրականության համալրման իր կարևոր նախաձեռնությունը սոցիոլոգ, ԵՊՀ դասախոս՝ Լիլիթ Շաքարյանը ներկայացնում է իր երկրորդ գիր-

քը, այս անգամ՝ նվիրված տեղեկատվական հասարակության զարգացման արդյունքում ծնված վորված մարտահրավերների վերլուծությանը: Ձեռնարկ, որը նշանակալի ձեռքբերում է ինչպես տեղեկատվական ոլորտի փորձագետների և ուսանողների, այնպես էլ տեղեկատվական խնդիրների հետ առնչվող լայն հանրության համար, քանի որ անդրադառնում է ոչ միայն տեղեկատվական հասարակության հայեցակարգերի վերլուծությանը, այլ նաև զանգվածային լրատվամիջոցներով կիրառվող մանիպուլյացիոն տեխնոլոգիաներին ու հոգեբանական մեթոդներին: Այս համատեքստում Լ. Շաքարյանը դիտարկում է ներկայիս կիբեռդարաշրջանի մարտահրավերներն ու դրանց հաղթահարման միջոցները՝ որպես առանցք ունենալով

մեդիագրագիտությունը, որի խնդիրն է մեդիայի սպառողին դարձնել ավելի ակտիվ ու քննադատ՝ մարդկանց օգնելով ճանաչել մեդիա հաղորդագրություններում կիրառվող հանդուսման մեթոդները, տարբերակել քարոզչությունն օբյեկտիվ տեղեկատվությունից և վերջապես՝ խուսափել լրատվամիջոցների բացասական ազդեցությունից:

Հայալեզու մասնագիտական գրականության զարգացումը հայրենամեծ գործ է և օրհասական խնդիր մեր երկրում բարձրագույն կրթության արժևորման և զարգացման տեսանկյունից: Այս կարևորագույն գործի պատասխանատվությունն է ստանձնել նաև Լիլիթ Շաքարյանը՝ նպատակ ունենալով մասնագիտական ներդրում ունենալ մեր երկրի կրթական համակարգի զարգացման գործընթացում:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն (Էկոկենտրոն) ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ հետևյալ թափուր տեղերի համար.

1. Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի և հեռազնման բաժնի ղեկավար,
2. Կենսաէներգետիկայի և կերի որակի բաժնի ղեկավար,
3. Սննդային շղթաների ռիսկի գնահատման տեղեկատվական և վերլուծական կենտրոնի ղեկավար,
4. Ռադիոէկոլոգիայի բաժնի ղեկավար:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, ովքեր ունեն գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, համապատասխան ոլորտին վերաբերող գիտական տպագրություններ՝ այդ թվում միջազգային գրախոսվող ամսագրերում և առնվազն 10 տարվա գիտական գործունեության փորձ:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը

- ա) դիմում՝ ուղղված Էկոկենտրոնի տնօրենին,
- բ) անձնագրի և սոցիալական քարտի պատճեն-

ները,

- գ) երկու լուսանկար, 364 չափի.
- դ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- ե) թաղվածք աշխատանքային գրքույկից,
- զ) ինքնակենսագրություն
- է) բարձրագույն կրթության վկայականի պատճեն,
- ը) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հաստատող փաստաթղթերի պատճենները,
- թ) տպագրած գիտական աշխատությունների ցանկը

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերը ներկայացնել ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի գիտական քարտուղարին՝ սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում՝ աշխատանքային օրերին, ժամը՝ 9:00-ից 13:00:

Հասցեն քզերևան, Արուսյան 68, հեռախոս՝ 010 572-924, բջջային՝ 055 933-556:

ՀՀ ԳԱԱ «Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի վարիչի թափուր տեղի համար:

Դիմողը պետք է ունենա գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ ղեկավարելու ունակություն:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) դիմում,
- բ) լուսանկար,
- գ) թաղվածք աշխատանքային գրքույկից,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- զ) գիտական աստիճանը

հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,

- է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,
- թ) հրատարակված աշխատանքների ցանկ,
- ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),

ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-36-37:

## Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 22.07.2021 թ.:

"ГИТУТИОН" ("Hayka") газета НАН РА